

II. 2004 ԹՎԱԿԱՆԻՆ ԿԱՏԱՐՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐՆ ԸՍՏ
«2004 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ
ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԾՐԱԳՐԻ»

«2004 թվականի պետական վիճակագրական աշխատանքների ծրագրում» ներառված, հաշվառված թվով 429 անուն, սակայն աշխատանքների քանակով 444 միավոր ծածկագրերով (պարբերականությունը հաշվի առած՝ 1793 միավոր աշխատանք) վիճակագրական աշխատանքներից 426-ը, կամ 441 միավորը (պարբերականությունը հաշվի առած՝ 1790 միավոր աշխատանք, կամ 99.8%) կատարվել են սահմանված ժամկետներում և պարբերականությամբ:

Չկատարված 3 աշխատանքները տարեկան պարբերականությամբ են:

«Տնտեսության հիմնական միջոցների արժեքը (հաշվեկշռային և մնացորդային) ըստ տնտեսության ճյուղերի» (ծածկագիր 113001) և «ՀՀ ազգային հարստությունը» (ծածկագիր 113002) աշխատանքների ամբողջական իրականացման ներկայումս անհնարինությունը պայմանավորված է հանրապետության տարածքում (թե գործող, և թե չգործող կազմակերպությունների) հիմնական միջոցների համատարած հաշվեգրման (հաշվառման) իրականացման անհրաժեշտությամբ, ինչպես նաև հանրապետության բնակիչների միասնական շուկայական գներով վերագնահատված հնարավորինս համընդգրկուն և ամբողջական տեղեկատվության աղբյուրների բացակայության հանգամանքով, իսկ «Ոչ շուկայական ծառայությունների ոլորտի (պետական հիմնարկների) վարձու աշխատողների աշխատանքի վարձատրությունը» աշխատանքը (ծածկագիր 142012), համաձայն ՀՀ ԱՎԾ և ԱՊՀ միջպետական վիճակագրական կոմիտեի, Ռուսաստանի Դաշնության վիճակագրության պետական կոմիտեի միջև ԱՊՀ տարածաշրջանում միջազգային համադրման ծրագրի իրականացման մասին փոխըմբռնման հուշագրի աշխատանքների կատարման ժամանակացույցի, կկատարվի 2005թ. ընթացքում (III եռամսյակ):

Վիճակագրական աշխատանքներն (ցուցանիշները) իրականացվում (հաշվարկվում) են Արժույթի միջազգային հիմնադրամի (ԱՄՀ) հիմնած և վիճակագրական տվյալների հավաքագրման, մշակման որակի, պարբերականության, ինչպես նաև տեղեկատվության տարածման միասնական չափորոշիչներ (ստանդարտներ) սահմանող «Տվյալների տարածման ընդհանուր համակարգին» (SSՀՄ) և «Տվյալների տարածման հատուկ ստանդարտին» (SSՀՄ) համապատասխան:

Թվարկվածներից՝ ՏՏՀՀ-ին Հայաստանի Հանրապետությունն անդամագրվել է դեռևս 2001թ. մարտի 29-ին, իսկ 2003թ. նոյեմբերի 7-ին Հայաստանի Հանրապետությունն անդամակցեց ՏՏՀՄ-ին (տես՝ ԱՄՀ [http:// docs. armstat. am /nsdp](http://docs.armstat.am/nsdp) ինտերնետային էջը), ըստ այդմ կատարելով նաև կարևոր քայլ՝ ուղղված երկրի վիճակագրական համակարգի համապատասխանեցմանը վիճակագրության ոլորտում միջազգային կարևոր ստանդարտներից մեկին:

ՀՀ ԱՎԾ 2004թ. կատարած աշխատանքները սույն հաշվետվության մեջ ներկայացված են վերոհիշյալ համակարգի հատվածներին, ինչպես նաև «2004 թվականի պետական վիճակագրական աշխատանքների ծրագրի» (դրա հավելվածների) կառուցվածքին (հաջորդականությամբ) համապատասխան: